Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-242-26.04.2022-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ածանցյալներ (այսուհետ՝ ածանցյալներ)՝ սինթետիկ կամ բնական ծագման նյութեր, որոնք առանձին տողերով ներառված չեն Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների ցանկում, որոնց քիմիական կառուցվածքն առաջացել է համապատասխան թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի քիմիական կառուցվածքում մեկ կամ մի քանի ջրածնի ատոմների, հալոգենների կամ հիդրոքսիլ խմբերի փոփոխումով (ձևական փոխարինում) այլ միարժեք կամ երկարժեք ատոմներով կամ փոխարինողներով (բացառությամբ՝ հիդրոքսիլ և կարբոքսիլ խմբերի), որոնցում ածխածնի ատոմների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի համապատասխան թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ելակետային քիմիական կառուցվածքում ածխածնի ատոմների քանակը: Այն դեպքում, եթե միևնույն նյութը կարող է համարվել մի քանի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ածանցյալ, ապա այն ճանաչվում է այն թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ածանցյալ, որի քիմիական կառուցվածքի փոփոխությունը պահանջում է նվազագույն քանակությամբ փոխարինողների կամ ատոմների ներառում.»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «անալոգների,» բառից հետո լրացնել «ածանցյալների,» բառը:

Հոդված 3. Օրենքի 38-րդ, 39-րդ, 40-րդ, հոդվածների վերնագրերում և տեքստերում «պրեկուրսորների» բառերից հետո լրացնել «,ածանցյալների» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

~~Առաջին~~

Լրամշակված նախագիծ
երկրորդ ընթերցում

Կ-242-26.04.2022-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

~~**ՕՐԵՆՔԸ**~~

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թմրամիջոցների ~~եւ~~և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-518-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունից հետո լրացնել ~~հետեւյալ~~հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն~~.~~.

«թմրամիջոցների ~~եւ~~և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ածանցյալներ ~~(~~(այսուհետ՝ ածանցյալներ~~)՝~~)՝ սինթետիկ կամ բնական ծագման նյութեր, որոնք առանձին տողերով ներառված չեն Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների ցանկում, որոնց քիմիական կառուցվածքն առաջացել է համապատասխան թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի քիմիական կառուցվածքում մեկ կամ մի քանի ջրածնի ատոմների, հալոգենների կամ հիդրոքսիլ խմբերի փոփոխումով ~~(ձեւական~~(ձևական փոխարինում~~)~~) այլ միարժեք կամ երկարժեք ատոմներով կամ փոխարինողներով ~~(~~(բացառությամբ~~՝~~ հիդրոքսիլ ~~եւ~~և կարբոքսիլ խմբերի~~),~~), որոնցում ածխածնի ատոմների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի համապատասխան թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ելակետային քիմիական կառուցվածքում ածխածնի ատոմների քանակը~~։~~: Այն դեպքում, եթե ~~միեւնույն~~միևնույն նյութը կարող է համարվել մի քանի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ածանցյալ, ապա այն ճանաչվում է այն թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ածանցյալ, որի քիմիական կառուցվածքի փոփոխությունը պահանջում է նվազագույն քանակությամբ փոխարինողների կամ ատոմների ներառում~~։~~. »:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «անալոգների,» բառից հետո լրացնել «ածանցյալների,» բառը:

Հոդված 3. Օրենքի 38-րդ, 39-րդ, 40-րդ, հոդվածների վերնագրերում և տեքստերում «պրեկուրսորների» բառերից հետո լրացնել «,ածանցյալների» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։~~2022 թվականի հուլիսի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-242-26.04.2022-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի վերնագիր	Առաջարկում ենք «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «լրացումներ» բառով, քանի որ օրենքի նախագծում լրացվել են նոր 2-րդ և 3-րդ հոդվածներ, որոնցով նախատեսվում է համապատասխան լրացումներ կատարել «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում:	***Ընդունվել է:*** «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինվել է «լրացումներ» բառով:	***Ընդունվել է:***
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի նոր 2-րդ և 3-րդ հոդվածներ	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ածանցյալների վերաբերյալ լրացումներ կատարել նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 40-րդ գլխի մի շարք հոդվածներում՝ առաջարկում ենք ածանցյալների շրջանառության արգելքի	***Ընդունվել է*** Օրենքի նախագիծը առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ և 3-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 2**. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «անալոգների,»	***Ընդունվել է:***

			վերաբերյալ կարգավորումներ նախատեսել նաև «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում (այսուհետև՝ Օրենք), մասնավորապես՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, 38-րդ, 39-րդ և 40-րդ հոդվածների վերնագրերում և տեքստերում «պրեկուրսորների» բառերից հետո լրացնելով «,ածանցյալների» բառերը: Միաժամանակ, առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:	բառից հետո լրացնել «ածանցյալների,» բառը: **Հոդված 3**. Օրենքի 38-րդ, 39-րդ, 40-րդ, հոդվածների վերնագրերում և տեքստում «պրեկուրսորների» բառերից հետո լրացնել «,ածանցյալների» բառերը:»: Նախագծի հոդվածների համարակալումը վերանայվել է:	
3	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը համապատասխանեցնել **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետին: Առաջարկում ենք նաև փոխել հոդվածի համարակալումը:**	***Ընդունվել է*** **Նախագծի 2-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.** **«Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:»:**	***Ընդունվել է:***
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս**	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության» բառերը շարադրել Օրենսգրքի ընդունման ամսաթվից հետո՝ առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով:	***Ընդունվել է*** **Օրինագծի 1-ին հոդվածի 1-ին մասում** «Հայաստանի Հանրապետության» բառերը շարադրվել են Օրենսգրքի ընդունման ամսաթվից հետո:	***Ընդունվել է:***

2	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս**	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «օրենսգրքի» բառից հետո լրացնել «(այսուհետև՝ Օրենսգիրք)» բառերը:	***Ընդունվել է*** Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «օրենսգրքի» բառից հետո լրացվել են «(այսուհետև՝ Օրենսգիրք)» բառերը:	***Ընդունվել է:***
3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս**	Ածանցյալը չի կարող ունենալ պրեկուրսոր, ուստի Օրենսգրքի 394-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում ածանցյալների վերաբերյալ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում «393-399-րդ,» թվերը փոխարինել «393-րդ, 395-399-րդ,» թվերով:	***Ընդունվել է*** Նախագծի 1-ին հոդվածում «393-399-րդ,» թվերը փոխարինվել են «393-րդ, 395-399-րդ,» թվերով:	***Ընդունվել է:***
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս**	Առաջարկում ենք տեխնիկական փոփոխություն կատարել և Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) վերնագրերում ցանկացած հոլովաձևով շարադրված «(անալոգ)» բառերից հետո լրացնել «կամ դրանց ածանցյալներ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, 2) 1-ին մասերում ցանկացած հոլովաձևով շարադրված «(անալոգ)» բառերից հետո լրացնել «կամ դրանց ածանցյալ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով:»:	***Ընդունվել է*** Օրինագծի 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «1) վերնագրերում ցանկացած հոլովաձևով շարադրված «(անալոգ)» բառերից հետո լրացնել «կամ դրանց ածանցյալներ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, 2) 1-ին մասերում ցանկացած հոլովաձևով շարադրված «(անալոգ)» բառերից հետո լրացնել «կամ դրանց ածանցյալ»	***Ընդունվել է:***

				բառերը՝ համապատասխան հոլովաձևերով:»:	
5.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի նոր 2-րդ հոդված**	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 1-ին հոդվածով ածանցյալների վերաբերյալ լրացում է կատարվում Օրենսգրքի 27-րդ հոդվածում՝ առաջարկում ենք համապատասխան լրացում կատարել նաև Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերում: Միաժամանակ, առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:	***Ընդունվել է*** Օրինագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 2**. Օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերում «նյութերի» բառերից հետո լրացնել «, դրանց ածանցյալների» բառերը:»: Նախագծի հոդվածների համարակալումը վերանայվել է:	***Ընդունվել է:***